

Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավարներ՝ Սուսաննա Պետրոսյան, Կարինե Զիրաքյան

Թեմա

Գրել առարկայական ծրագրի թեման, որի շրջանակում իրականացվելու է նախագիծը:

Նախագծի անվանում	Քիմիական նյութերի հատկությունների ուսումնասիրում
Առարկա(ներ)	Քիմիա
Ուսումնական տարի, կիսամյակ	2023-2024 ուստարի, 1-ին կիսամյակ
Տևողություն	Միջնաժամկետ
Գասարան	VII
Աշակերտների թիվ	17
Տեսակը	միջնաժամկետ
Ձևաչափը	<input checked="" type="checkbox"/> տեսական <input checked="" type="checkbox"/> գործնական <input type="checkbox"/> անհատական <input checked="" type="checkbox"/> թիմային <input type="checkbox"/> ընթացիկ <input type="checkbox"/> ամփոփիչ

Նախագծի նպատակը

- Օգնել աշակերտներին իրականացնել ստեղծագործական աշխատանք:
- Հնարավորություն տալ ինքնաարտահայտվելու և ինքնահաստատվելու
- Ձևավորել ինքնուրույն, ինքնակրթությամբ զբաղվող, նպատակասլաց, պատասխանատու, հետաքրքրասեր անհատ:
- Օգնել ինտեգրվելու խմբում, համագործակցել:
- Զարգացնել նյութերը ճանաչելու և կյանքում կիրառելու հմտություններ:

Նախագծի վերջնարդյունքները

- Գաղափարի իրականացման համար թիմային աշխատանքի ապահովում
- Ծրագրային և ոչ ծրագրային նյութերի ստեղծում
- Սեփական ուժերի նկատմամբ հավատի ամրապնդում, ինքնաբացահայտում
- Սովորողը ձեռք բերի ուսումնական պաշար նյութերի մասին
- Կարողանա օգտվել տարբեր կայքերից և գրականությունից
- Կարողանա մեկնաբանել և ներկայացնել իր աշխատանքը
- Գնահատի նախագծին մասնակցելու օգտակարությունը

Նախագծի նկարագիրը Դասերի ընթացքի նկարագրություն

- Նախագծային թեմայի ընտրություն
- Թեմայի տրոհում ենթաթեմաների
- Խմբերի ձևավորում

Թեման ներկայացվեց առաջնային գիտելիք պարունակող տեղեկատվությամբ, ինչը նպաստեց սովորողների կողմնորոշմանը՝ ինչպես սկսել աշխատանքը, նաև մասնակիցների մոտիվացմանը: Ձևավորվեց համատեղ աշխատանքային կանոններին հետևելու հմտություններ, եղան քննարկումներ, երկխոսություններ: Կոնկրետ հարցերի շուրջ եղան դժվարություններ, ուսուցչի օգնությամբ հաղթահարվեցին : Փորձերի միջոցով ապահովվեց աշխատանքի վերջնարդյունքը:

Սովորողների ճանաչողական հետաքրքրությունները զարգացնելու նպատակով մասնակիցները այցելեցին ԵՊՀ քիմիայի ֆակուլտետ, դիտեցին հետաքրքիր փորձեր, լսեցին հետաքրքիր տեղեկություններ, ծանոթացան որոշ սարքերի աշխատանքի մեխանիզմին:

Կարողունակություններ, որոնք կգարգանան այս նախագծի ընթացքում

Նախագծային աշխատանքը նպաստում է ինքնաճանաչողության, մտածողության, երևակայության զարգացմանը: Սովորողների մոտ արթնացնում է մեծ ոգևորություն, նպաստում է համագործակցային կարողությունների ձևավորմանը: Տալիս է ինքնագնահատման հնարավորություն: Նախագիծը թիմային աշխատանքի և թիմում համագործակցելու արդյունավետ միջոց է: Նախագծի ընթացքում ծնվում են նորանոր գաղափարներ:

Միջառարկայական կապեր

Մեր օրերում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապեր: Նախագծի ընթացքում կարմիր թելի պես անցնում էր այդ կապը՝ քիմիա- կենսաբանություն:

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

- Ամսագիր կամ թերթ, պաստառ, գրքույկ
- տեսանյութ
- Սահիկաշար
- Տեղեկատվական թերթիկ

Հետազոտության աղբյուրներ

- Վիքիպեդիա
- [http:// medex.am](http://medex.am)

Գնահատում

Նախագծային աշխատանքի գնահատում /16ժամ/

<< Քիմիական նյութերի հատկությունների
ուսումնասիրում >>

04.10.2023 - 30.11.2023թ

N	Ազգանուն, անուն	ընթացք (6)			բովանդակություն (8)				ներկայացում(6)		միավոր	գնահատական
		Նախա Պատրաս տական (1)	բուն ընթացք (4)	ամփո փում (1)	Համա Պատասխա նություն թեմային (3)	Ամբողջա Կանություն (2)	Հիմնա վորվա ծություն (2)	գրագի տություն (1)	ձև (3)	խոսք (3)		
1	Թոչ սոյ ան Վիկտորյ ա	1	4	1	2	2	2	1	2	3	18	9
2	Հակոբյ ան Կիեն	1	4	1	2	2	2	1	3	3	19	9
3	Իզիթ ան Աննա	1	2	1	2	1	2	1	3	2	15	7
4	Հակոբյ ան Անի	1	4	1	2	2	2	1	3	2	18	9
5	Պապիկ ան Ալ են	1	3	1	3	2	2	1	2	2	17	8
6	Տոթ ան Էլ ինա	1	2	1	2	2	2	1	2	1	14	7
7	Տոթ ան Կորինե	1	2	1	2	2	2	1	2	1	14	7
8	Հարություն ունյ ան Աննե	1	3	1	3	2	2	1	2	2	17	8
9	Ալեքսիս ան Գաբիկ	1	2	1	2	2	2	1	2	2	15	7
10	Բարիսյ ան Գյ անե	1	4	1	2	2	2	1	2	3	18	9
11	Հովհաննիսյ ան Լարե	1	4	1	3	2	2	1	2	3	19	9
12	Արեփանյ ան Կիմեն	1	3	1	3	2	2	1	2	2	17	8
13	Ստեփանյան Մոնա	1	4	1	2	2	2	1	2	3	18	9
14	Առաքելյան Արեգ	1	4	1	2	2	2	1	3	3	19	9
15	Այդինյան Արտաշես	1	4	1	2	2	2	1	3	3	19	9
16	Դավթյան Անան	1	4	1	2	2	2	1	2	3	18	9
17	Հունանյան Լևոն	1	4	1	2	2	2	1	2	3	18	9

Հաշվետվություն

<< Քիմիական նյութերի հատկությունների ուսումնասիրում >> նախագծային աշխատանքի վերաբերյալ.

Նախագծային աշխատանքը նպատակ ուներ սովորողներին ինտեգրելու խմբային աշխատանքում, զարգացնելու հետազոտական, ստեղծագործական հմտություններ, ճանաչելու նյութերը, դրանք կյանքում ճիշտ օգտագործելու կարողություն: Այս աշխատանքն ընտրել են 17 աշակերտներ, որոնք բաժանվեցին երկու խմբի: Յուրաքանչյուր խումբ իր դասավանդող ուսուցչի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան նախագծային աշխատանքի իրականացմանը, ինչի վերջնարդյունքում ստեղծվեց սահիկաշար, կատարված փորձերի ցուցադրական նմուշներ և տեղեկություններ նյութերի հատկությունների և դրանց քիմիական ազդեցությունների մասին:

Աշխատանքներն սկսեցինք 2023թ. հոկտեմբերի 4 – ից: Յուրաքանչյուր աշակերտ ընտրեց ենթաթեման և գործնական առաջադրանք և ձեռնամուխ եղավ աշխատանքին: Տարբեր աղբյուրներից օգտվելով կազմեցին նախագծային աշխատանքի տեսական մասը, իսկ փորձերը կատարեցին դպրոցի քիմիայի լաբորատորիայում: Հարկ են համարում նշել, որ փորձերը բարձրացնում էին սովորողների ոգևորությունը, ամրապնդում տեսական գիտելիքը, ներշնչում վստահություն: Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում քննարկվում էր որևէ մասնակցի աշխատանք, գնահատվում և նոր հանձնարարականներ էր տրվում:

Նոյեմբերի 30 – ին ավարտվեցին հետազոտական աշխատանքները և աշակերտները ներկայացրեցին իրենց կատարած գործնական տեղեկատվական աշխատանքները հանձնաժողովին՝ սահիկաշար, փորձերի վերջնարդյունքներ:

Առաջարկություններ

1. Նախագծային աշխատանքում գերակշռի գործնական , փորձնական մասը/Լաբորատոր փորձեր/
2. Տվյալ նախագծային աշխատանքն ունենա կիրառություն կյանքում